**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1**
**№ ԲՄԱՊՁԲ-20-7/5-2 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ**

ք. Երևան 10 .04. 2020թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետ Ն. Յոլյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Գնորդ, մի կողմից և «Եղեգնաձորի Պահածոների գործարան» ՓԲԸ-ն՝ ի դեմս ընկերության տնօրեն Ա. Խաչատրյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Վաճառող, մյուս կողմից, հիմք ընդունելով 11.02.2020թ. կնքված № ԲՄԱՊՁԲ-20-7/5-2 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.13 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

**1. Համաձայնագրի առարկան**

1.1 Սույն Համաձայնագրով Վաճառողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով և ձևով, Համաձայանագրի № 1 Հավելվածով՝ նախատեսված ժամկետներում և ծավալներով Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին որպես սեփականություն հանձնել Պայմանագիրի № 1 Հավելվածով նախատեսված տեսակի և որակի սննդամթերք (այսուհետև՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

**2. Համաձայնագրի գինը և վճարման կարգը**

2.1 Սույն Համաձայնագրով Վաճառողի մատակարարած Ապրանքի յուրաքանչյուր միավորի գինը ներկայացված է սույն Համաձայնագրի № 1 հավելվածում: Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է **33 616 884 (երեսուներեք միլիոն վեց հարյուր տասնվեց հազար ութ հարյուր ութսունչորս) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն**: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

2.2 Գնորդն իրեն հանձնած Ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 3.3 կետին համապատասխան, բայց ոչ ուշ քան 15.12.2020թ.:

**3. Այլ պայմաններ**

3.1. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3. Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4. Սույն Համաձայնագիրը կազմված է 2 թերթից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն Համաձայնագրի № 1, № 2 Հավելվածները՝ բաղկացած են 1 թերթից, հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ թիկունքի վարչությունը:

**4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:**

**ԳՆՈՐԴ**
ք. Երևան, Բագրևանդի 5
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011144079
ՀՎՀՀ 02522157
ՀՀ պաշտպանության նախարարության
ՆՏԱ դեպարտամենտի պետ
Ն. ՅՈԼՅԱՆ

**ՎԱՃԱՌՈՂ**
«Եղեգնաձորի Պահածոների Գործարան» ՓԲԸ
ՀՀ, ք. Եղեգնաձոր, Վարդան Զորավար 34
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 11500213933139
ՀՎՀՀ 08902412
Տնօրեն
Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

**Հավելված N 1**
№ ԲՄԱՊՁԲ-20-7/5-2 գնման պայմանագրի N 1 համաձայնագրի

## ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Հ/հ | Գնման առարկան | Չ/մ | Քանակ | Մեկ միավորի գինը /ՀՀ դրամ/ | Ընդհանուր գումարը /ՀՀ դրամ/ | Ապրանքների մատակարարումը ըստ ամիսների 2020թ. | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | մայիս | հունիս | հուլիս |
| 1 | պահածոյացված բանջարեղեն /Պահածոյացված կարտոֆիլ/ | կգ | 58566 | 574 | 33616884 | 19000 | 19000 | 20566 |

**Հավելված N 2**
№ ԲՄԱՊՁԲ-20-7/5-2 գնման պայմանագրի N 1 համաձայնագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Հ/հ | Գնման առարկան | CPV-ի կոդը | *Նախատեսվում է ֆինանսավորել 2020թ. ըստ ամիսների, բայց ոչ ուշ քան 15.12.2020թ | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր |
| 1 | պահածոյացված բանջարեղեն /Պահածոյացված կարտոֆիլ/ | 15331178/534 | 10906000 | 21812000 | 33616884 | 33616884 | 33616884 | 33616884 | 33616884 | 33616884 |

** Վճարման ենթակա գումարը ներկայացված է աճողական կարգով:*

**ԳՆՈՐԴ**

ՀՀ պաշտպանության նախարարության
ՆՏԱ դեպարտամենտի պետ

Ն. ՅՈԼՉՅԱՆ

**ՎԱՃԱՌՈՂ**

«Եղեգնաձորի Պահածոների Գործարան» ՓԲԸ
տնօրեն

Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ